# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13 փետրվարի 2020թ.
Ժամը 10:00

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Լիլիթ Ոսկանյանը՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ
Անդամներ՝
Նավասարդ Նավասարդյան՝ Ավտոպարկի և տեխնիկական միջոցների պատասխանատու/ինժեներ
Հրաչյա Համբարձումյան՝ SS մոնիտորինգի պատասխանատու
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2020թ. փետրվարի 06-ին gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. փետրվարի 13-ը ժամը 10:00-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Հասցե** | **Ապրանքի անվանումը** | **գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/** | **գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/** | **Նախահաշվային գին ՀՀ դրամ** |
|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժին 1 | | | | | | |
| 1 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | Ք. Երևան, Զավարյան 57/19 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 6612000 | 6612000 | 6960000 |
| 2 | «Հիդրո Գրուպ» ՍՊԸ | Ք. Երևան, Արշակունյաց 39/20 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 5655000 | 6786000 | 6960000 |
| 3 | Էդգար Պետրոսյան Ա/Ձ | Ք. Երևան, Գալշոյան փ. 12/88 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 6873000 | 6873000 | 6960000 |
| 4 | «Էկոմիքս» ՍՊԸ | Ք. Երևան, Բաբաջանյան 60/2 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 8627500 | 10353000 | 6960000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ | Ք. Երևան, Քաջազնունի 1 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 5568000 | 6681600 | 6960000 |
| 6 | Աննա Մարգարյան Ա/Ձ | Արարատի մ., գ. Նորաբաց, Երևանյան 6-րդ փ., տուն 9 | Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | 6612000 | 6612000 | 6960000 |
| Չափաբաժին 2 | | | | | | |
| 7 | Արթուր Անանյան Ա/Ձ | Արարատի մ., գ. Նորաբաց, Երևանյան 6-րդ փ., տուն 9 | Ցախավել | 9900000 | 9900000 | 9900000 |

3. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են սահմանված կարգի պահանջներին:

4. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՄՄ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների կողմից ներկայացվել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց առաջին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից: Երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Արթուր Անանյան Ա/Ձ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից: Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել առաջին չափաբաժնի մասով «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին: «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկն առջին չափաբաժնի մասով գերազանցում է գնում կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՄՄ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետը 15.02.2020թ.-19.02.2020թ. ներառյալ՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո էլ. Փոստի /easm.himnark@gmail.com/ միջոցով ծանուցել «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ին առաջին չափաբաժնի մասով և Արթուր Անանյան Ա/Ձ-ին երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրերի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակիցների կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները։

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լ. Ոսկանյան

Անդամներ՝ Ն. Նավասարդյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան